**ԼՈՒՍԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ**
ԵՊՀ-ի ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ,
կենսաբանական գիտությունների թեկնածու

**ՏԱԹԵՎ ՍԻՄՈՆՅԱՆ**
ԵՊՀ-ի ընդհանուր հոգեբանության ամբիոնի մագիստրոս

**ԱՐՏԱԿ ՂՈՒԼՅԱՆ**
«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի
իրականացման կենտրոն» ՊՈԱԿ- ի ուսումնական մասի պետ

# *ՊՐՈԲԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ*

Ուսումնասիրված է ԵՄ անդամ պետություններում ստեղծված պրոբացիոն համակարգերի կառուցվածքն ու գործառույթները: Ներկայացված է պրոբացիոն ծառայության ամենատարբեր բնույթի գործառույթների իրականացումը, այդ թվում՝ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ վերահսկողության և ուղղորդման տարր պարունակող ու չպարունակող գործառույթներ: Համեմատական վերլուծություն է իրականացվել Հայաստանի և ԵՄ անդամ պետություններում պրոբացիոն ծառայությունների կատարած գործառույթների վերաբերյալ:

***Հիմնաբառեր***- *պրոբացիոն ծառայություն, գործառույթ, կառուցվածք, Հայաստանի Հանրապետություն:*

Ժամանակակից սոցիումի գործառնության կարևոր պայմաններից է հանդիսանում դրա անդամների ապահովությունը, անվտանգությունը և համերաշխությունը: Սակայն հասարակության լիարժեք համերաշխության խոչընդոտ են հանդիսանում մարդկանց մեկուսացված խմբեր, որոնք վարում են հանցագործ կյանք: Նման մարդկանց սոցիալական հարմարման և ռեադապտացիայի արդյունավետ միջոցներից է հանդիսանում պրոբացիոն ծառայության համակարգի ստեղծումը, որը ենթադրում է ազատազրկման այլընտրանքային տարբերակ:

ԵՄ նոր անդամ պետություններում հաջողվել է պրոբացիոն համակարգերը ստեղծել և հաստատել բավականին կարճ ժամանակահատվածում: Խորհրդային կարգերի ժամանակ մասնագիտացված սոցիալական աշխատողներ չկային, հետևաբար այդ ժամանակահատվածում ազատազրկմանը փոխարինող այլընտրաքային տարբերակներն ու պրոբացիոն աշխատանքները լավ զարգացած չէին, թեև որոշ երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված էին այդպիսի միջոցառումներ, դրանք գործնականում չէին կիրառվում (Բուլղարիա, Չեխոսլովակիա, Էստոնիա, Լատվիա): Եվրոպայի պրոբացիոն ծառայությունները հիմնականում գործում են հանցագործություն կատարած այնպիսի անձանց հետ, ովքեր համեմատաբար պակաս թվով հանցագործություններ են կատարել և սովորաբար չունեն դատվածություն: Միացյալ Թագավորության (Անգլիա և Ուելս) և Նիդերլանդների պրոբացիոն ծառայությունները բացառություն են կազմում: Նպատակ հետապնդելով թեթևացնել քրեակատարողական հաստատությունների բեռը՝ այդ երկրների պրոբացիոն ծառայություններն աշխատում են նաև ավելի լուրջ հանցագործություններ կատարած անձանց հետ: Թեև, որպես կանոն, որոշ տեսակի հանցագործությունների համար պրոբացիայի բացառումը նշված չէ, օրենսդրությամբ սահմանվում է, թե որ դեպքերում դատարանը կարող է ազատազրկման դատավճիռը հայտարարել պայմանական՝ վեց ամսից (Խորվաթիա) մինչև չորս տարի (Ռումինիա): Երկրների մի մասում ավանդապես պրոբացիոն ծառայության գործառույթների մաս հանդիսացող գործառույթը փոխանցվել է բանտերի ներսում աշխատող հատուկ սոցիալական ծառայություններին (օրինակ՝ Նիդերլանդներ): Որոշ պրոբացիոն ծառայություններ բանտի ներսում կատարվող աշխատանքը դեռևս համարում են իրենց հիմնական գործառույթներից մեկը: Պատիժների միայն մի քանի տեսակ կա, որոնց դեպքում պրոբացիոն ծառայությունը չի ներգրավվում, օրինակ՝ տուգանքը կամ առանց պրոբացիայի կիրառման պատժի հետաձգումը (Բելգիա, Ֆրանսիա և Լյուքսեմբուրգ), ներման կամ

համաներման վերաբերյալ որոշումները (օրինակ՝ Իռլանդիա և Նորվեգիա): 1990թ. սկզբին արևելաեվրոպական պետությունների մեծ մասը քրեական արդարադատության համակարգերի բարեփոխումներ մեկնարկեց՝ միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ: Վերջիններիս կողմից խրախուսվում էր պրոբացիայի հասկացությունը և կարևորվում համայնքային սանկցիաների ու միջոցառումների կիրառությունը, ինչպես նաև՝ մեդիացիան ու զոհին աջակցելու մեխանիզմը: Պրոբացիա ներդրող առաջին երկիրը Չեխիայի Հանրապետությունն էր՝ 1991թ.-ին, որին հաջորդեցին Սլովակիան, Էստոնիան, Լատվիան, Ռումինիան, Լիտվան, Հունգարիան և Լեհաստանը, որոնք այժմ ունեն պրոբացիոն ծառայությունների խոստումնալից համակարգ[1]:

Պրոբացիոն պետական ծառայությունը, սովորաբար, արդարադատության նախարարության ներքո գործող կենտրոնացված ազգային կառույց է: Այս դեպքում, պրոբացիոն ծառայությունը կարող է անկախ կազմակերպվել որպես վարչություն կամ պետական մարմին, հանդիսանալ պետական մարմնի մաս (Իռլանդիա, Ռումինիա, Մոլդովա, Պորտուգալիա) կամ քրեակատարողական հաստատության հետ ընդգրկվել կառավարման միևնույն կառուցվածքի մեջ (Բուլղարիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Իտալիա, Լիտվա, Նորվեգիա, Իսպանիա, Շվեդիա, Անգլիա, Ուելս) կամ պրոբացիոն աշխատանքները կարող են բաշխված լինել քրեական արդարադատության ներքո գործող պրոբացիոն ծառայությունների և սոցիալական ծառայությունների միջև, ինչպես օրինակ Գերմանիայում, Կատալոնիայում և Շվեցարիայում է, կամ լինել այլ կից ծառայությունների շրջանակում, ինչպես օրինակ՝ տուժողի պաշտպանության մեդիացիայի և այլ մարմիններն են (Հունգարիա, Բելգիա): Պրոբացիոն աշխատանքները կարող են նաև կատարվել մասնավոր կազմակերպությունների կողմից (Ավստրիա ևՆիդերլանդներ), որոնք վերահսկվում և ֆինանսավորվում են այդ երկրների արդարադատության նախարարությունների կողմից: Լյուքսեմբուրգում պրոբացիոն ծառայությունը դատախազության մաս է հանդիսանում, իսկ Շոտլանդիայում պրոբացիոն աշխատանքները կատարվում են տեղական մարմինների սոցիալական ծառայությունների միջոցով: Որոշ երկրներում կենտրոնական կամ տեղական պրոբացիոն ծառայություններն անկախ, միջգերատեսչական խմբից խորհրդատվական աջակցություն են ստանում (Բուլղարիայում՝Պրոբացիոն խորհուրդ, Կատալոնիայում՝ Սոցիալական ռեաբիլիտացիայի միջգերատեսչական կոմիտե, Չեխիայում՝ Պրոբացիայի ու մեդիացիայի խորհուրդ և այլն): Այս միջգերատեսչական և խորհրդատվական խմբերը սովորաբար բաղկացած են պրոբացիոն ծառայության ներկայացուցիչներից, ինչպես նաև դատավորներից, դատախազներից, տեղական գործատուներից, փորձագետներից և այլն: Պրոբացիոն ծառայության կառուցվածքը տարածաշրջանային և տեղական մակարդակներում հիմնականում նման է դատական համակարգի կառուցվածքին (Բուլղարիա, Էստոնիա, Լատվիա, Ռումինիա), ոստիկանության համակարգի կառուցվածքին (Դանիա) կամ դատական ու բանտային համակարգերի կառուցվածքներին (Ֆրանսիա, Բուլղարիա, Իտալիա և այլն): Անգլիայում և Ուելսում, օրինակ, պրոբացիոն ծառայությունները մեծապես ներգրավված են հանրային անվտանգության և հանցագործությունների կանխարգելման հարցերով ընթացող աշխատանքներում:

Պորտուգալիայում պրոբացիոն ծառայությունը ներգրավված է սոցիալական թիրախ-խմբերի ուղղված ծրագրերում, որոնք գործուն են առանձին խնդիրների հետ, ինչպես օրինակ՝ գործազրկությունը, թմրամոլությունը կամ նախկինում ազատազրկված անձանց ինտեգրումը հասարակությունում:

Ծառայությունը նաև մասնակցություն ունի ներառական ազգային ծրագրում, թմրամիջոցների և թմրամոլության պայքարի դեմ ազգային ծրագրում և զբաղվածության ազգային ծրագրում: Որոշ երկրներում, ինչպես օրինակ, Իռլանդիայում և Մալթայում, պրոբացիոն ծառայությունը պետք է դատարանին ներկայացնի տուժողի նկատմամբ հանցավոր գործողությունների ազդեցության մասին տեղեկանք: Իռլանդիայում տուժողի վերաբերյալ զեկույցը կարող է ներկայացվել պրոբացիոն զեկույցից զատ: Այս երկրներում, ինչպես նաև Հս. Իռլանդիայում և Մալթայում, պրոբացիոն ծառայությունը պարտավոր է որոշակի կատեգորիաների ստուգողների դեպքում վերջիններիս տեղեկացնել հանցագործություն կատարած անձանց ազատման պլանների պատրաստ լինելու մասին: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Ավստրիան, Իսպանիան, (Կատալոնիա) և Հունգարիան, պրոբացիոն ծառայության գործառույթներից մեկը տուժողին երբեմն նույնիսկ խոցելի իրավիճակում գտնվող վկաներին տեղեկատվություն տրամադրելն ու դատավարության ընթացքում օժանդակելն է:

Պրոբացիոն համակարգերի գործառնական և կազմակերպչական հարցերը նախատեսված են տարբեր ակտերով, ինչպես օրինակ՝ կիրարկման մասին օրենքները (Բուլղարիա, Դանիա, Լիտվա, Նորվեգիա և Իսպանիա) և պրոբացիայի մասին առանձին օրենքները կամ հրամանագրերը, (Չեխիայի Հանրապետություն, Իսպանիայում, Ավստրիա, Էստոնիա, Ֆրանսիա, Լատվիա, Ռումինիա,

ՄԹ և այլն): Ինչ վերաբերում է կոնկրետ պրոբացիոն գործողություններին կամ ամենօրյա գործելակերպին, երկրների մեծ մասում օգտագործվում են շրջաբերականներ (Չեխիայի Հանրապետություն, Էստոնիա ), ցուցումներ, (Իսպանիա, Կատալոնիա) կամ նախարարական հրամանագրեր (Էստոնիա, Բուլղարիա և Լատվիա):

ԵՄ երկրներում պրոբացիոն համակարգերը դասակարգվում են ըստ մատուցված ծառայությունների՝ պրոբացիոն ծառայություններ հիմնված հանրային միջոցառումների և պատիժների խրախուսման վրա, դատական համակարգին օժանդակելու վրա հիմնված պրոբացիոն ծառայություններ, ուղղման մոդելի/ հանրային պաշտպանության վրա հիմնված պրոբացիոն ծառայություններ: Եվրոպայի պրոբացիոն ծառայությունների աշխատանքների միայն որոշ մասն է իրականցվում սահմանափակ թվով պրոբացիոն ծառայությունների կողմից, օրինակ՝ աջակցություն ընտանիքին և քրեակատարողական հիմնարկներ կամավոր այցելությունների համակարգում (Լյուքսեմբուրգ), կալանքի տակ գտնվող անձանց հսկողություն (Չեխիա): Շատ աշխատանքներ կապված են առանձին պատիժների կամ ընթացակարգերի հետ և կարող են իրականցվել միայն այն երկրներում, որտեղ նմանատիպ պատիժներ ընդունված են: Պրոբացիոն ծառայությունները տարբեր երկրներում ամենատարբեր գործառույթներ են իրականացնում: Կախված երկրների իրավական համակարգից՝ պրոբացիոն ծառայությունները կարող են ամենատարբեր բնույթի գործառույթներ իրականացնել, այդ թվում՝ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ վերահսկողության և ուղղորդման տարր պարունակող ու չպարունակող գործառույթներ: Պրոբացիոն ծառայության գործառույթներն ու աշխատանքները բավականին ակտիվ կերպով իրականացնող երկիրը հանդիսանում է Անգլիան, այսինքն՝ երկիրը, որի իրավական համակարգում ծագել է պրոբացիոն համակարգը: Գործառույթները ակտիվ կերպով իրականացվում է նաև Կատալոնիայում, Խորվաթիայում, Չեխիայում: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, թեև Հայաստանը չունի պրոբացիոն ծառայություն, այնուամենայնիվ բավական մեծ թվով գործառույթներ է իրականացնում: Հիմնականում գործառույթներն իրականացվում են տարբեր հասարակական կազմակերպությունների, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի կողմից[2]: Սակայն, եթե մյուս երկրները ունեն պրոբացիոն ծառայություն և ծառայության շրջանակներում են իրականացնում այդ գործառույթները, ապա ՀՀ-ը չունենալով տվյալ ծառայությունը, այնուամենայնիվ, իրականցնում է և՛ վերահսկողական գործառույթները, և՛ աջակցման ու օժանդակության գործառույթը, և թմրամոլների նկատմամբ: Սակայն տարբեր կազմակերպությունների և օժանդակ մարմինների փոխարեն ավելի նպատակահարմար կլինի Հայաստանում ևս ստեղծվեր պրոբացիոն ծառայություն, որը կկատարեր իր գործառույթները:

Ստորև ներկայացվում է ՀՀ-ում իրականացվող պրոբացիոն գործառույթները [տե՛ս աղ.1]:

Աղյուսակ 1

ՀՀ-ում իրականացվող պրոբացիոն գործառույթները

| | Հայաստան |
|---|---|
| Հանրային, ուղղիչ աշխատանքների նկատմամբ վերահսկողություն, դրանց կազմակերպումը և այլն | X |
| Սոցիալական հարցումների/նախքան դատավճռի հրապարակումը զեկույցների ներկայացում | X |
| Պրոբացիոն պատիժների /պայմանների կատարման նկատմամբ վերահսկողություն | |
| Դատավճռի կասեցման/պայմանական ազատման ժամանակ վերահսկողություն և այլն | X |
| Թմրամոլների/հարբեցողների համար բուժման ծրագրեր կամ այլ տեսակի հանցագործություն կատարած անձանց համար նախատեսվող բուժման ծրագրեր | X |
| Ուսուցողական ծրագրերի/դասընթացների կամ այլ ուսումնական միջոցառումների նկատմամբ վերահսկողություն/դրանց կազմակերպում | |
| Պայմանական վաղաժամկետ/ժամանակավոր դեպքում վերահսկողություն և այլ | X |
| Մեդիացիա/հաշտություն տուժողի հետ/օժանդակություն տուժողին | |
| Առաջնային և երկրորդային կանխարգելում | |
| Աջակցություն դատապարտյալներին քրեակատարողական հիմնարկներում, նախապատրաստում և օժանդակություն հաստատությունը թողնելու ժամանակ, և այլն. Կալանքի անհատական պլանի մշակում և կառավարում | |
| Թմրամոլների համար հատուկ միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողություն | X |
| Համաներման/ներման կամ պայմանական վաղաժամկետ ազատման/պատժի պայմանական չկիրառման հետ առնչվող խորհրդատվական զեկույցների ներկայացում | X |
| Հանցագործություն կատարած անձի համար վերահսկողական աջակցություն, ում մինչդատական կալանքը պայմանականորեն կասեցվել է | |
| Հոգեկան հիվանդ կամ սահմանափակ մտավոր կարողություններով հանցագործություն կատարած անձանց նկատմամբ վերահսկողություն(ամբուլատոր/տնային պայմաններում բուժման վերաբերյալ որոշումների դեպքում) | X |

| | |
|---|---|
| Հանցագործություն կատարած այն անձանց նկատմամբ վերահսկողություն/օժանդակում և այլն, ում գործի դատական քննությունը պայմանականորեն հետաձգվել է Հանցագործություն կատարած այն անձանց նկատմամբ վերահսկողություն/օժանդակում և այլն, ում գործի դատական քննությունը պայմանականորեն հետաձգվել է | X |
| Էլեկտրոնային մանիթորինգի նկատմամբ վերահսկողություն և այլն | |
| Մասնակի ազատազրկման նկատմամբ վերահսկողություն | X |
| Այն անձանց օժանդակության տրամադրում, ում նկատմամբ կիրառվել է պատժից ժամանակավոր կամ պայմանական ազատում/համաներում | |
| Վաղ շրջանում տրամադրվող աջակցություն/միջամտություն/սոցիալական աջակցություն, օժանդակություն և տեղեկատվության տրամադրում | |
| Տնային կալանքի ժամանակ հանցագործություն կատարած անձանց աջակցություն/օժանդակության տրամադրում | |
| Այլ աշխատանքներ | |
| Քրեակատարողական հաստատությունը թողնելուց հետո հոգածություն՝ հանցագործություն կատարած անձի նկատմամբ և վերականգնողական աշխատանք նրա հետ | |
| Ցերեկային հաճախման կենտրոնների գործունեություն | |
| Հասցեի պարտադիր գրանցում | X |
| Ազատության սահմանափակում կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկում | X |
| Մասնակի կալանքի նկատմամբ վերահսկողություն և այլն | X |
| Հատուկ բուժման վերաբերյալ որոշումների, սեռական հանցագործությունների կանխման մասին որոշումների, սեռական հանցագործությունների ժամանակ ազատազրկման այլ պատժատեսակով փոխարինման մասին որոշումների դեպքում վերահսկողություն և այլն | X |
| Նախադատական կալանքի տակ գտնվող անձանց նկատմամբ վերահսկողության սահմանում/աջակցություն | |
| Օժանդակության տրամադրում ընտանիքին | |
| Ազատության սահմանափակմամբ դատավճիռների կիրառման նկատմամբ վերահսկողություն | X |
| Տույժի կիրառման նկատմամբ վերահսկողություն | X |
| Կամավոր բանտային այցելությունների համակարգում | |
| Գործի փոխանցում երեխաների գործերով զբաղվող ատյանին | X |
| Հանցագործություն կատարած անձանց նախապատրաստում տուն վերադառնալուն, տուն վերադառնալու ժամանակ նրանց աջակցության տրամադրում | |

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները Հայաստանի Հանրապետությունում պրոբացիոն ծառայության կատարած գործառույթների և կառուցվածքի վերաբերյալ ցույց տվեցին, որ Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է պրոբացիոն ծառայության մի շարք գործառույթներ, սակայն, միևնույն ժամանակ՝ ծառայության բացակայության պատճառով գործառույթներն և աշխատանքները իրականացվում են տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից և չեն կրում համակարգված բնույթ: Ուստի՝ պրոբացիոն ծառայության ներդրումը Հայաստանի Հանրապետությունում կնպաստի համակարգված և ուղղորդված փոփոխությունների դատահիրավական, տնտեսական և սոցիալական դաշտում:

[1] ԵԱՀԿ, Հայաստանի Հանրապետությունում Պրոբացիայի ծառայության ստեղծման խնդիրներն ու առանձնահատկությունները, Աստղիկ տպարան:
[2] Գասպարյան Ա., Հովակիմյան Գ. Սոցիալական աշխատանքը քրեական արդարադատության համակարգում: Եր.: «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, 2013. 174 էջ:

*Գրականության ցանկ*

1. Գասպարյան Ա., Հովակիմյան Գ. Սոցիալական աշխատանքը քրեական արդարադատության համակարգում: Եր.: «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, 2013. 174 էջ:
2. ԵԱՀԿ, Հայաստանի Հանրապետությունում Պրոբացիայի ծառայության ստեղծման խնդիրներն ու առանձնահատկությունները, Աստղիկ տպարան:
3. http://webcache.googleusercontent.com/search?q=cache:_qrtxro1xYkJ:vtt.net.ru/files/LATVIYa Zakon_o_Gosudarstvennoi_sluzhbe_probacii.doc+&cd=3&hl=ru&ct=clnk&gl=ru, Организация и персонал Государственной службы пробации.
4. http://www.osce.org/hy/yerevan/97036

**Лусине Степанян**
Доцент кафедры общей психологии ЕГУ,
кандидат биологических наук

**Татев Симонян**
магистр кафедры общей психологии ЕГУ

**Артак Гулян**
Начальник учебной части ГНКО “Центр правового образования и осуществления реабилитационных программ”

РЕЗЮМЕ

***Сравнительный анализ вклада службы пробации между Арменией и другими странами***

Изучены структура и функции систем пробации созданных в государствах-членах ЕС. Представлена реализация функций различного характера, в том числе и функций, содержащих и не содержащих элементы контроля по отношению к лицам, совершившим преступления. Проведен сравнительный анализ действия служб пробации в Армении и государствах - членах ЕС.

***Ключевые слова:*** *служба пробации, функция, структура, Республика Армения.*

**Lusine Stepanyan**
YSU, chair of General Psychology, associate of professor, Doctor of Biology

**Tatev Simonyan**
YSU, chair of General Psychology, master of Psychology

**Artak Ghulyan**
Head of the Educational Department of the “Legal Education and Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO

SUMMARY

***Comparative analysis of the contribution probation service between Armenia and other countries***

The structure and functions of the probation system created in EU Member States is studied. The realization of the different functions of the Probation Service including the functions of containing and not containing an element of control and guidance towards the persons committing crimes was conducted. Then comparative analysis of probation service in Armenia and EU member states has been carried out.

***Keywords:*** *probation service, function, structure, Republic of Armenia*